ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-27/26-IS/INSTECONOM

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Մերի Գագիկի Մանուչարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 144 558 500 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,

2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 144 558 500 << դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
Հ/հ՝ 900011033033
ՀՎՀՀ՝ 02704199
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

(ստորագրություն)

Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ

ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15
Հ/հ՝ 900018005380
ՀՎՀՀ՝ 01506257
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն)

Կ. Տ.

Մերի Գագիկի Մանուչարյան

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

Մանուչարյան Մերի Գագիկի

Հավելված N 1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-27/26-IS/INSTECONOM պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Մերի Գագիկի Մանուչարյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-27/26-IS/INSTECONOM պայմանագրի գնի վերաբերյալ՝ 144 558 500 << դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

(ստորագրություն) Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն) Կ. Տ.

Մերի Գագիկի Մանուչարյան

Հավելված N 2
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-27/26-IS/INSTECONOM պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	12
Այլ պարբերականում հրապարակում՝	70
Գրքեր, մենագրություններ՝	3
Գիտաժողովի նյութեր՝	35

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Մերի Գագիկի Մանուչարյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Հակոբյան Եվգենյա Արտաշեսի

Կ. Տ.

Հավելված N 3
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-27/26-IS/INSTECONOM պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝(ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	139 012 260	27 802 452	34 753 065	34 753 065	41 703 678
2.	տնտեսական ծախսեր՝	3 636 000	727 200	909 000	909 000	1 090 800
3.	այլ ծախսեր՝	1 910 240	382 048	477 560	477 560	573 072
Ընդամենը՝		144 558 500	28 911 700	36 139 625	36 139 625	43 367 550

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Մերի Գագիկի Մանուչարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Կարինե Գեղամի Հակոբյան

Կ. Տ.

Հավելված N 3.1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-27/26-IS/INSTECONOM պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**3 636 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	2 900 000
2.	*գազի ծառայություն*	0
3.	*ջրամատակարարման ծառայություն*	250 000
4.	*կապի ծառայություն*	486 000
5.	*աղբահանություն*	0
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**1 910 240**
1.	Տպագրական ծախսեր	1 000 000
2.	այլ	910 240

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Մերի Գագիկի Մանուչարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Կարինե Գեղամի Հակոբյան

Կ. Տ.

Հավելված N 5
«29» դեկտեմբերի 2025 թ.
N 1-27/26-15/INSTECONOM պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):
Ծրագիրը բխում է ինստիտուտի կանոնադրության 2-րդ բաժնի 1-ին կետից: Ծրագրի նպատակը ինստիտուտի 4 հիմնական գիտական ուղղությունների շրջանակներում (մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ, ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ, տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն) հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ գիտական հետազոտությունների իրականացումը, ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումն ու համապատասխան լուծումների առաջադրումն է: Ծրագրի իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվում ՀՀ կառավարության գործունեության ծրագրից բխող հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև ստացված գիտական արդյունքների հիման վրա կիրառական նշանակության առաջարկությունների առանձնացմանն ու ՀՀ կառավարության համապատասխան լիազոր մարմինների ներկայացմանը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):
   - Ծրագրի իրականացման ժամանակահատվածը 1 տարի է. սկիզբ՝ 01.01.2026թ., ավարտ՝ 31.12.2026թ.:
   - Ծրագրի ենթաբաժինների աշխատանքային խմբերը օրացուցային պլանով նախատեսված աշխատանքների կատարման մասին ներկայացնում են միջանկյալ հաշվետվություններ:
   - Միջանկյալ գիտական արդյունքները և ամփոփիչ հաշվետվությունը ներկայացվում են պատվիրատուին՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի եզրակացության հիման վրա:
   - Միջանկյալ և ամփոփիչ հաշվետվությունների ձևավորումը կատարվում է պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):
   1) Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ

Հարկային համակարգի բարեփոխումները որպես տնտեսության ներդրումային գրավչության բարձրացման հիմնական նախապայման: Հարկերի դերը պետության ֆինանսական բազայի ձևավորման, ինչպես նաև կենսագործունեության ապահովման գործում հսկայական է, քանի որ դրանք համարվում են պետության առջև ծառացած խնդիրների ֆինանսավորման հիմնական աղբյուր: Հարկային համակարգից է կախված տնտեսության զարգացումը, ձեռնարկատիրական գործունեության ակտիվացումը, ինչն էլ հիմնավորում է ճիշտ և գրագետ հարկային քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը: Հարկային քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է ներդնել այնպիսի մեխանիզմներ, որոնք չեն վտանգի պետության անվտանգությունը, հնարավորինս կնվազեցնեն ռիսկերը և այլն: Կայուն հարկային համակարգից է կախված նաև տնտեսության ներդրումային գրավչության աստիճանը, ինչպես նաև բիզնես միջավայրի մրցունակությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը, հարկային վարչարարությունում և հարկային քաղաքականությունում կատարված բարեփոխումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերջին

տարիներին ՀՀ հարկային օրենսդրությունում պարբերաբար կատարվեցին փոփոխություններ, մասնավորապես՝ եկամտային հարկի տարբերակված դրույքաչափից անցումը համահարթ դրույքաչափին, միկրոձեռնարկատիրության համակարգը, շրջանառության հարկի դրույքաչափերի և այլ փոփոխությունները, համընդհանուր հայտարարագրումը և այլն, անհրաժեշտություն է առաջացել գնահատելու այս ամենի ազդեցությունը տնտեսության վրա, վերլուծելու բյուջեի հարկային մուտքերի դինամիկան, որի նպատակով թեմայի շրջանակներում ուսումնասիրվելու են ՀՀ հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունները, դրանց արդյունքները, կատարված փոփոխությունների ազդեցությունը ՀՀ բիզնես միջավայրի վրա, վեր են հանվելու ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրները, հարկային քաղաքականության բացթողումները, ներկայացվելու են հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման մոտեցումները, մշակվելու են համապատասխան մեխանիզմներ և միջոցառումներ, որոնք կնպաստեն հետագայում հարկային վարչարարության բարելավմանը, հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Թեմայի կատարման ընթացքում ուսումնասիրվելու և ՀՀ հետ համեմատական վերլուծության է ենթարկվելու նաև միջազգային փորձը, մասնավորապես ներկայումս ներդրվող համընդհանուր հայտարարագրման առումով, որն ուղղված է լինելու ՀՀ-ում միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունների բացահայտմանը, ինչպես նաև ներդրման մեխանիզմների մշակմանը:

Ընտրված թեման համապատասխանում է ՀՀ Կառավարության՝ 2021-2026 թթ 6.8՝ Հարկաբյուջետային քաղաքականություն և 6.9՝ Հարկային և մաքսային վարչարարություն բաժիններին, իսկ թեմայի կատարման ընթացքում մշակված առաջարկությունները համապատասխան հիմնավորումներով ներկայացվելու են ՀՀ կառավարության համապատասխան գերատեսչություններին:

Թվային ֆինանսների, ֆինտեխի և միկրոֆինանսավորման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ «Արդյունաբերություն 5.0»-ի համատեքստում: Թվային ֆինանսների, ֆինտեխի և միկրոֆինանսավորման ինտեգրումը ֆինանսական համակարգում էական ազդեցություն ունի տնտեսական աճի և ներառական ֆինանսների զարգացման տեսանկյունից: Երկրում ավանդական բանկային ենթակառուցվածքների բավարար չլինելը խոսում է ֆինանսական ծառայությունների անհասանելիության, միկրոֆինանսավորման պակասի և ֆինանսական անհավասարության մասին: Մինչդեռ թվային ֆինանսների և ֆինտեխի ինտեգրումը հնարավորություն կտա բարձրացնելու ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և նվազեցնելու ֆինանսական անհավասարությունը: Միկրոֆինանսավորումն էլ, իր հերթին, նպաստում է աղքատության նվազեցմանը և աշխատատեղերի ստեղծմանը՝ առաջարկելով ֆինանսական աջակցություն խոցելի խմբերին:

Թեմայի նպատակն է գնահատել ֆինանսական ներառականության ներկայիս վիճակը ՀՀ-ում՝ կենտրոնանալով թվային ֆինանսների և միկրոֆինանսավորման դերի վրա ֆինանսական ծառայությունների հասանելիության ընդլայնման գործընթացում՝ հաշվի առնելով «Արդյունաբերություն 5.0»-ի ընձեռած հնարավորությունները: Թեմայի շրջանակներում վերլուծվելու են ներառական ֆինանսների հիմնական խոչընդոտները, ֆինտեխ նորարարությունների ներդրման ազդեցությունը, ինչպես նաև ոլորտը կարգավորող շրջանակների (օրենսդրահիրավական դաշտ, պետական քաղաքականություն) արդյունավետությունը: Թեմայի իրականացման արդյունքում նախատեսվում է մշակել գործնական և կիրառական առաջարկություններ՝ ուղղված ՀՀ-ում ֆինանսական հասանելիության բարելավմանը, թվային ֆինանսական ծառայությունների զարգացմանը, միկրոֆինանսավորման բարելավմանը և այլ այլն:

Թեմայի իրականացման շրջանակներում կատարվելու են.

- Քանակական ուսումնասիրություններ, մասնավորապես.
  -Ֆինանսական հասանելիության, օնլայն բանկինգի և միկրոֆինանսավորման օգտագործման վերաբերյալ հարցումներ և տվյալների վերլուծություն:
  - Թվային վճարումների, օնլայն ֆինանսական ծառայությունների և միկրովարկավորման միտումների գնահատում՝ ֆինանսական հատվածի վիճակագրական տվյալների հիման վրա:
- Որակական հետազոտություններ, մասնավորապես.

-Հարցազրույցներ շահակիր կողմերի հետ, այդ թվում՝ քաղաքականություն մշակողների, ֆինտեխ ընկերությունների, բանկերի, միկրոֆինանսական հաստատությունների և սպառողների:

-Հաջողված թվային ֆինանսական և միկրոֆինանսավորման նախաձեռնությունների դեպքերի ուսումնասիրություններ Հայաստանում և համադրելի տնտեսություններում:

- Համեմատական վերլուծություններ քաղաքականության մասով, մասնավորապես.

-ՀՀ-ում ոլորտին առնչվող քաղաքականության համեմատություն միջազգային լավագույն փորձի հետ:

-Կարգավորող շրջանակների գնահատում և բացերի հայտնաբերում (սպառողների պաշտպանություն, ֆինտեխ կարգավորում և այլն) :

Թեմայի իրականացման հիմնական սպասվող արդյունքներն են.

- Ֆինանսական ներառականության համապարփակ գնահատում ՀՀ-ում, հիմնական խոչընդոտների վերհանում:
- Ֆինտեխի, օնլայն ֆինանսական ծառայությունների և էլեկտրոնային դրամապանակների ազդեցության, բնակչության ֆինանսական վարքագծի և ֆինանսական մասնակցության գնահատում:
- Միկրոֆինանսավորման արդյունավետության վերլուծություն՝ ՓՄՁ-ների և խոցելի համայնքների զարգացման տեսանկյունից:
- Գործնական առաջարկություններ՝ ֆինանսական ծառայությունների հասանելիության բարձրացման, ֆինտեխ նորարարությունների ներդրման խթանման և սպառողների պաշտպանության ապահովման համար:

Թեման համապատասխանում է ՀՀ Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի (հաստատված է ՀՀ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ) 2-րդ՝ «Տնտեսություն» գլխի «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում», «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում» մասերին, ինչպես նաև 2.3՝ «Բարձր տեխնոլոգիաներ» գլխի «Թվայնացում» մասին:

2) Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ

Պարենային անվտանգության հիմնախնդիրները նոր աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում: Ժամանակակից աշխարհաքաղաքական փոփոխությունների համատեքստում, ներառյալ հակամարտությունները, պատժամիջոցները, համաճարակները և կլիմայական ճգնաժամերը, պարենային անվտանգության խնդիրները դառնում են պետությունների կայուն զարգացման և գլոբալ կայունության առանցքային նշանակությունը: Մատակարարման շղթաների խաթարվածությունը, սննդամթերքի գների աճը և ռեսուրսների սահմանափակ հասանելիությունը վտանգ են ներկայացնում միլիոնավոր մարդկանց համար, հատկապես զարգացող երկրներում: Պարենային անվտանգության հետազոտությունները նոր աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում օգնում են բացահայտել ռիսկերը և մշակել ռազմավարություններ՝ դրանք նվազագույնի հասցնելու համար:

Հետազոտության նպատակն է վերլուծել աշխարհաքաղաքական իրադարձությունների ազդեցությունը պարենային անվտանգության վրա և մշակել առաջարկություններ՝ ամրապնդելու պարենային համակարգերի ճկունությունը ազգային և գլոբալ մակարդակներում:

Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են մի շարք խնդիրներ, այն է.

- Ուսումնասիրել ժամանակակից աշխարհաքաղաքական միտումները և դրանց ազդեցությունը պարենային ապրանքների շուկաների վրա:
- Վերլուծել պարենային անվտանգության հիմնական ռիսկերը, ներառյալ պատժամիջոցները, հակամարտությունները և կլիմայի փոփոխությունը:
- Գնահատել սննդամթերքի անվտանգության ապահովման գործող մեխանիզմների արդյունավետությունը:
- Մշակել առաջարկություններ՝ սննդի համակարգերը նոր աշխարհաքաղաքական իրողություններին հարմարեցնելու համար:

Հետազոտությունը հիմնված կլինի միջդիսցիպլինար մոտեցման վրա՝ ներառյալ վիճակագրական տվյալների վերլուծությունը, սցենարների մոդելավորումը, փորձագետների հարցազրույցները և պարենային անապահովության առավել վտանգի տակ գտնվող երկրների

դեպքերի ուսումնասիրությունները: Կօգտագործվեն միջազգային կազմակերպությունների (FAO, Համաշխարհային բանկ, ՄԱԿ) և ազգային վիճակագրական գործակալությունների տվյալները:

Ակնկալվող արդյունքներն են.

1. Աշխարհաքաղաքական անկայունության պայմաններում պարենային անվտանգության վրա ազդող հիմնական գործոնների բացահայտում.
2. Պետություններին և միջազգային կազմակերպություններին առաջարկությունների մշակում պարենային համակարգերի ամրապնդման համար:
3. Աշխարհաքաղաքական նոր իրադարձությունների համատեքստում պարենային անվտանգության ռիսկերի կանխատեսման մոդելի ստեղծում.

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել պարենային անվտանգության ոլորտում պետական քաղաքականության ձևակերպման, միջազգային աջակցության և ճգնաժամերի կանխարգելման ծրագրերի մշակման, ռիսկերի և դրանց հաղթահարման ուղիների մասին հանրությանը տեղեկացնելու համար:

Թեման համապատասխանում է ՀՀ Կառավարության 2021-2026թթ. ծրագրի 2.4. կետին:

3) Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ ժողովրդագրական հիմնախնդիրներ

Արհեստական բանականության տեխնոլոգիաների ազդեցությունը աշխատաշուկայի փոփոխվող պայմաններում: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների փոփոխությունները աշխատաշուկայում ստեղծել են նոր հնարավորություններ ինչը հանգեցրել է արհեստական բանականության լայն կիրառությանը: Արհեստական բանականությունը մի կողմից նպաստում է նոր աշխատատեղերի առաջացմանը, բայց միևնույն ժամանակ աշխատաշուկայից դուրս մղում արդեն գոյություն ունեցող ավանդականը:

Ներկայումս արհեստական բանականությունը էական առաջընթաց է գրանցել այն մասնագիտություններում, որոնք ներառում են ոչ սովորական և ճանաչողական առաջադրանքներ, որոնք սովորաբար կատարում են միջին և բարձր որակավորում ունեցող աշխատողները: Մյուս կողմից, կրթված աշխատողներն ավելի հեշտ են ընդունում և սովորում նոր տեխնոլոգիաներ և հակված են ավելի հաճախ մասնակցել վերապատրաստման արդիականացմանը՝ թույլ տալով նրանց ավելի լավ օգտվել աշխատաշուկայում արհեստական բանականության ընձեռած հնարավորություններից: Արհեստական բանականությունը գնալով դառնում է էլ ավելի ունակ ավտոմատացնելու առաջադրանքները, որոնք պահանջում են համակարգում, հիմնավորում և հաղորդակցություն, ինչը կարող է ազդել այս ոլորտներում աշխատատեղերի վրա: Արհեստական բանականությունը կարող է օգնել կամրջել հմտությունների բացը և աշխատողներին ավելի արագ զարգացնել՝ թույլ տալով նրանց ավելի շատ ժամանակ հատկացնել քննադատական և վերլուծական մտածողության վրա:

Թեմայի շրջանակում կուսումնասիրվի արհեստական բանականության տեխնոլոգիաների ընդունման ներկա մակարդակի տեսակետները, տեխնոլոգիական զարգացումներով պայմանավորված աշխատուժի կազմի վերջին փոփոխությունները և վերլուծվի նոր տեխնոլոգիաների կիրառմամբ աշխատանքային միջավայրի ավտոմատացման առավել ենթակա ճյուղերը: Կներկայացվի աշխատատեղի և աշխատուժի պահանջների հնարավոր փոփոխությունները, ինչպես նաև այն մասնագիտությունները որոնք կարող են աճել ապագայում, այդ թվում՝ արհեստական ինտելեկտի և մեքենայական ուսուցման մասնագետների, կայուն զարգացման մասնագետների, բիզնես-վերլուծաբանների և տեղեկատվական անվտանգության մասնագետների:

Կառաջարկենք աշխատանքային հարաբերությունների փոփոխություններ՝ հիմնված մարդկանց և ռոբոտների արդյունավետ համագործակցություն վրա: Արհեստական բանականության արդյունավետ օգտագործման ներուժը կախված է մարդկանց և մեքենաների համագործակցությունից՝ վերջնական օգտագործողների համար նոր փորձառություններ ստեղծելու և զարգացնելու համար:

Թեման համապատասխանում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 4.6 (աշխատանք եվ սոցիալական պաշտպանություն) և 2.3 (բարձր տեխնոլոգիաներ) կետերին:

4) Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն

Տնտեսագիտական ուսմունքների պատմության և տնտեսական վարքագծի փոփոխության միտումները արդի ազգային տնտեսության հանգույցներում: Թեմայի ուսումնասիրության

շրջանակներում կատարվելու են տնտեսագիտական մտքի պատմության դիտարկումները՝ դրանք առնչելով ազգային տնտեսության արդի պրոցեսների հետ: Շատ կարևոր է ներկայանում որոշակի ուրվագծերի ձևով տեսադաշտում պահել ինչպես ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի, այնպես էլ անդրադարձը հանրապետությունում այլևայլ հրապարակումներին: Դրանցում սովորաբար արծարծվում են հանրապետության տնտեսության ինչպես միկրո, այնպես էլ մակրոմակարդակներով բազում խնդիրներ: Դա, ըստ էության, լինելու է հրապարակված հետազոտությունների համառոտ տեսություն, տնտեսության մեջ կատարվող տեղաշարժերի վերաբերյալ դիտարկումների ուրվագիծ, որն օգտակար է և՛ գործնական, և՛ տեսական նկատառումներով:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ
ՊՈԱԿ-ի տնօրեն՝

_____ (Մերի Մանուչարյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝
Մանուչարյան)

_____ (Մերի
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 6
«29» դեկտեմբերի 2025 թ.
N 1-27/26-15/INSTECONOM պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1.	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման» ծրագիր	Գիտական հետազոտություններ 4 ուղղություններով՝	Գիտական թեմաների կատարում՝	I եռամսյակ II եռամսյակ
		1. Մակրոտնտեսական հինախնդիրներ և ֆինանսներ	– Հարկային համակարգի բարեփոխումները որպես տնտեսության ներդրումային գրավչության բարձրացման հիմնական նախապայման - Թվային ֆինանսների, ֆինտեխի և միկրոֆինանսավորման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ «Արդյունաբերություն 5.0»-ի համատեքստում	III եռամսյակ IV եռամսյակ
		2. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ	- Պարենային անվտանգության հիմնախնդիրները նոր աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում	
		3. Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ	– Արհեստական բանականության տեխնոլոգիաների ազդեցությունը աշխատաշուկայի փոփոխվող պայմաններում	
		4. Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն	- Տնտեսագիտական ուսմունքների պատմության և տնտեսական վարքագծի փոփոխության միտումները արդի ազգային տնտեսության հանգույցներում	

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ի տնօրեն՝ _____ (Մերի Մանուչարյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Մերի Մանուչարյան)
(անուն ազգանուն) *(ստորագրություն)*

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*